ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի հուլիսի 15 -ի
N - 296 L որոշմամբ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Վճարային քարտերի և փոխանցումների վարչություն Պրոդուկտների մշակման վարչություն Պրոդուկտների մշակման բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	2025 թվականի օգոստոսի 6-ից
Տարածում	«Այդի Բանկ» ՓԲԸ բոլոր ստորաբաժանումներ «Այդի Բանկ» ՓԲԸ քարտապաններ
Այլ դրույթներ	Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Վարչության նախագահի 2025 թվականի ապրիլի 25-ի N 155-Լ կարգադրությամբ հաստատված «Այդի Բանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման կանոնները
Առնչվող փաստաթղթեր	«Վճարային քարտերի թողարկման, սպասարկման և փակման» ընթացակարգ «Քարտային գործարքների մոնիթորինգի և հետգանձումների իրականացման» ընթացակարգ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4 «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և հաճախորդի հետ գործարար հարաբերությունները դադարեցնելու» ընթացակարգ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 6
ԳԼՈՒԽ 4. ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ 9
ԳԼՈՒԽ 5. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 10
ԳԼՈՒԽ 6. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ԱՆՀՊՈՒՄ (CONTACTLESS) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 13
ԳԼՈՒԽ 7. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ՔԱՐՏԻՑ ՔԱՐՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 13
ԳԼՈՒԽ 8. ՔԱՐՏԻ ԿՈՐՍՏԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՋԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14
ԳԼՈՒԽ 9. ՔԱՐՏԻ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՈՒՄ 15
ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ 17
ԳԼՈՒԽ 11. ՔԱՐՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ 18
ԳԼՈՒԽ 12. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ 22
ԳԼՈՒԽ 13. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 26
ԳԼՈՒԽ 14. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ 27
ԳԼՈՒԽ 15. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 28
ԳԼՈՒԽ 16. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ 29
ԳԼՈՒԽ 17. ՔԱՐՏԻ ՓԱԿՈՒՄԸ 32
ԳԼՈՒԽ 18. ՔԱՐՏԻ ԹՈՔԵՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԹՈՔԵՆՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 33

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն կանոնների նպատակն է սահմանել «Այդի Բանկ» ՓԲԸ կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև փոխհարաբերությունների հիմնական պայմանները և քարտի օգտագործման կանոնները (այսուհետ՝ Կանոններ)՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa, MasterCard) կանոնների:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) ***Բանկ***՝ «Այդի բանկ» ՓԲԸ,
   2) ***ՀՀ***՝ Հայաստանի Հանրապետություն,
   3) ***ՀՀ ԿԲ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
   4) ***Քարտ***՝Բանկի սեփականությունը հանդիսացող վճարային քարտ, որը տրամադրվում է քարտապանին՝ սահմանված գործողության ժամկետում, իր քարտային հաշվից կանխիկ միջոցներ ստանալու և անկանխիկ փոխանցումներ կամ վճարումներ կատարելու նպատակով,
   5) ***Վիրտուալ քարտ***՝ առանց ֆիզիկական Քարտի տրամադրման թողարկված վճարային Քարտ, որը կարող է պատվիրվել հաճախորդի կողմից «IDBanking» հարթակի և «Idram&IDBank» հավելվածի միջոցով, և որը կարող է օգտագործվել Քարտային հաշվից անկանխիկ փոխանցումներ, Բանկի մասնաճյուղերում գումարի կանխիկացում և այլ անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով: Ընդ որում, Վիրտուալ քարտերը տրամադրվում են միայն ֆիզիկական անձ հաճախորդներին,
   6) ***Դիմում***՝ Բանկի Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման դիմում-հայտ (օֆերտա), որի օրինակելի ձևը հաստատվում է Բանկի վարչության նախագահի կողմից,
   7) ***Ակցեպտ***՝ Բանկի Վճարային քարտի տրամադրման և սպասարկման դիմում–հայտի ընդունում (ակցեպտ), որի օրինակելի ձևը հաստատվում է Բանկի վարչության նախագահի կողմից,
   8) ***Պայմանագիր***՝ Բանկի հետ վճարային Քարտի թողարկման և սպասարկման համար կնքված պայմանագիր, համաձայնագիր, այդ թվում՝ Օֆերտա/Ակցեպտ,
   9) ***Հաճախորդ***՝ ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ով Բանկի հետ կնքել է Բանկային հաշվի բացման և սպասարկման համար գրավոր պայմանագիր, այդ թվում Բանկի համար ընդունելի հեռավար եղանակներով,
   10) ***Քարտապան*** 14 տարեկանը լրացած ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ով Բանկի հետ կնքել է Պայմանագիր,

11) ***Կից քարտ***՝ հիմնական քարտին կից տրամադրված Քարտ, որը տրվում է Քարտապանի դիմումի համաձայն իր կամ երրորդ անձի անունով, և նախատեսված է հիմնական քարտային հաշվին առկա միջոցներով գործարքներ կատարելու համար,
12) ***Կից քարտի պահառու (Պահառու)***՝ ֆիզիկական անձ, կամ անհատ ձեռնարկատեր, ում անունով թողարկվել է Կից քարտը,
13) ***Կորպորատիվ քարտ***՝ Բանկի սեփականությունը հանդիսացող վճարային քարտ, որը տրամադրվում է Բանկում ընթացիկ բանկային հաշիվ ունեցող ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ նաև՝ Կորպորատիվ հաճախորդ) իր քարտային հաշվից՝ սահմանված գործողության ժամկետում կանխիկ միջոցներ ստանալու, անկանխիկ վճարումներ կատարելու, ինչպես նաև Քարտի, քարտային հաշվի միջոցով այլ ծառայություններից օգտվելու նպատակով,
14) ***Կորպորատիվ քարտի օգտագործող***՝ Կորպորատիվ հաճախորդին տրամադրած Քարտը Քարտապանի անունից փաստացի տիրապետող և օգտագործող ֆիզիկական անձ,
15) ***Քարտային հաշիվ***՝ Քարտապանի և Բանկի միջև կնքված պայմանագրի հիման վրա Քարտապանի անունով բացված բանկային հաշիվ, որն օգտագործվում է Քարտով կամ դրա վավերապայմանների օգտագործմամբ գործարքներ իրականացնելու համար,
16) ***Թոքենացում***՝ Քարտի կցում Apple Pay/Google Pay էլեկտրոնային վճարումների համակարգերին,
17) ***Թոքեն***՝ Թոքենացման արդյունքում ստեղծված քարտի համարի թվային համարժեքը,
18) ***PIN ծածկագիր***՝ ծածկագիր, որը նախատեսված է Քարտապանի նույնականացման համար Քարտով կամ Թոքենով վճարումներ կատարելիս՝ համաձայն վճարահաշվարկային համակարգերի կանոնների,
19) ***Գաղտնաբառ***՝ Քարտապանի կողմից Բանկին տրամադրված ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից հեռախոսազանգի միջոցով Քարտի և Քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ինչպես նաև Բանկի և ԱրՔա վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված այլ դեպքերում,
20) ***CVV/CVC կոդ***՝ Քարտի դարձերեսին նշված և Քարտապանին նույնականացնող եռանիշ կոդ (Վիրտուալ քարտի դեպքում արտացոլվում է Idram&IDBank հավելվածում), որը կիրառվում է Քարտապանի կողմից առցանց վճարումներ կատարելիս,
21) ***Առևտրի/սպասարկման կետ (ԱՍԿ)***՝ ապրանքների վաճառքի և/կամ ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ առցանց միջավայրում, որտեղ հնարավոր է վճարում իրականացնել Քարտի կամ Թոքենի միջոցով,
22) ***ԱԳՄ***՝ ավտոմատ գանձման մեքենա (ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքավորման տեսակ), որի օգնությամբ Քարտով հնարավոր է իրականացնել կանխիկ և անկանխիկ գործարքներ,
23) ***«Cash in» կամ «Cash in» գործառնություն/գործարք***՝ Դրամական միջոցների կանխիկ մուտքագրում քարտին ԱԳՄ-ի միջոցով,

24) ***«Cash out» Կամ «Cash out» գործառնություն/գործարք***՝ Քարտից կանխիկ գումարի ստացում ԱԳՄ-ի միջոցով,

25) ***POS տերմինալ***՝էլեկտրոնային սարք, որը նախատեսված է Առևտրի/սպասարկման կետում անկանխիկ վճարում կամ բանկի տարածքում վճարային քարտով կանխիկացում իրականացնելու համար,

26) ***Գործարք***՝ Քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ, կատարված գործառնություն,

27) ***Հավաստագրում*** Քարտով գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ ծրագրային հաստատում,

28) ***Գործարքի կատարման օր***՝Քարտով գործարքը կատարելու փաստացի օր,

29) ***Գործարքի հաշվանցման օր***՝ Բանկի կողմից Քարտով կատարված գործարքը Քարտային հաշվով ձևակերպվելու և Քարտային հաշվի քաղվածքում գործարքի արտացոլման օր,

30) ***Քաղվածք***՝ Քարտային հաշվով կատարված գործարքների վերաբերյալ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվող հաշվետվություն,

31) ***Դեբիտորական պարտավորություն***՝ Քարտային հաշվին օգտագործման համար բավարար հասանելի մնացորդից (այդ թվում՝ վարկային միջոցներից) ավել օգտագործված գումար, ինչպես նաև Քարտային հաշվի գծով ձևավորված այլ պարտավորություն, որն առաջացնում է Քարտային հաշվին պարտավորություն բացասական մնացորդի տեսքով և ենթակա է մարման հաճախորդի կողմից,

32) ***Քարտային հաշվի չնվազող մնացորդ***՝ Բանկի սակագներով սահմանվող Քարտային հաշվին դրամական միջոցների առկայության նվազագույն գումարի չափ, որի օգտագործման վրա դրված է սահմանափակում,

33) ***Բանկի սակագներ, կամ Տեղեկատվական ամփոփագիր***՝ Բանկի ներքին իրավական ակտերով ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար սահմանված Քարտի թողարկման և սպասարկման պայմաններ և սակագներ,

34) ***Աշխատավարձային նախագիծ (փաթեթ)***՝ Բանկի հետ համագործակցող կազմակերպության հետ իրականացվող աշխատավարձային նախագիծ, կամ ֆիզիկական անձ հաճախորդներին իր անհատական նախաձեռնությամբ տրամադրված քարտ կամ ծառայությունների փաթեթ, որը նախատեսված է աշխատավարձ ստանալու նպատակով,

35) ***Stop List***՝Միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից մատուցվող ծառայություն, որը կասեցնում է offline հավաստագրումները՝ համապատասխան ցանկում Բանկի կողմից մուտքագրված քարտերի համար,

36) ***Առցանց հարթակներ***՝ «IDBanking» առցանց հարթակ, «Idram&IDBank» հավելված, «IDBusiness Mobile» հավելված, Բանկ-Հաճախորդ համակարգ,

37) ***NFC***՝ անհպում վճարման տեխնոլոգիա, որը թույլ է տալիս քարտը POS տերմինալին/ԱԳՄ-ին մոտեցնելով կատարել վճարում/կանխիկացում՝ առանց քարտը սարքի մեջ տեղադրելու:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Հաճախորդը Քարտ պատվիրելու նպատակով կարող է դիմել Բանկ՝ ներկայացնելով Բանկի կողմից ընդունելի ձևով Քարտի տրամադրման և սպասարկման Դիմում, այդ թվում՝ նաև Առցանց հարթակների միջոցով:
4. Քարտապանի կողմից կարող են փոփոխվել Դիմումի մեջ նշված Քարտապանի անհատական տվյալները, Քարտի սահմանաչափերը, ինչը կատարվում է Բանկի կողմից ընդունելի ձևով դիմումի ներկայացման միջոցով: Այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած:
5. Բանկի Իրավաբանական անձ/Անհատ Ձեռնարկատեր այն հաճախորդները, որոնք արդեն իսկ Բանկում ունեն գործող բանկային հաշիվ, կարող են Բանկ-հաճախորդ համակարգով (IDBusiness համակարգ) ուղարկել հաղորդագրություն՝ վճարային քարտի բացման վերաբերյալ, որը Բանկը կդիտարկի որպես հաճախորդի կողմից պատշաճ ներկայացած Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման դիմում-հայտ (օֆերտա)՝ համաձայն կից փաստաթղթի (հղում): Սույն կետով նախատեսված եղանակով ներկայացված նոր քարտի բացման առաջարկը ենթադրում է առաջարկ ներկայացրած անձի կողմից վճարային քարտերի թողարկման և սպասարկման բոլոր պայմանների ու սակագների հետ համաձայնություն, ինչպես նաև հաճախորդի անունից առաջարկը ներկայացրած ֆիզիկական անձի անձնական տվյալների մշակմանը համաձայնության տրամադրում:
6. Դիմում-հայտը (օֆերտան) Բանկի կողմից ակցեպտավորելու դեպքում դիմում-հայտի ընդունումը (ակցեպտը) ուղարկվում է էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի՝ Բանկում գրանցված՝ էլեկտրոնային փոստի հասցեին և քարտի տրամադրման և սպասարկման պայմանագիրը համարվում է պատշաճ կնքված:
7. Սույն կանոնների 5-րդ կետով նախատեսված դեպքերում Բանկ-հաճախորդ համակարգով ստացված և ուղարկված հաղորդագրություններն ու փաստաթղթերը (օրինակ՝ պայմանագրեր, համաձայնագիր, Բանկի ներքին իրավական ակտերով հաճախորդից պահանջվող փաստաթղթեր և այլն) համարվում են պատշաճ ներկայացած և ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ հաճախորդի և/կամ Բանկի համապատասխան իրավասու աշխատակցի ձեռագիր ստորագրությունը և վերջիններիս կողմից էլեկտրոնային եղանակով ստացած և ուղարկված փաստաթղթերը առաջացնում են տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող բոլոր իրավական հետևանքները:
8. Առցանց պատվիրված (հատուկ դեպքերում Բանկի հայեցողությամբ նաև մասնաճյուղում պատվիրված) Քարտը կարող է առաքվել Երևանի տարածքում Հաճախորդի նախընտրելի հասցեով՝ Հաճախորդի քարտային հաշվին առաքման ծառայության համար անհրաժեշտ գումարի առկայության դեպքում, եթե Բանկի կողմից տվյալ պահին սահմանված է նման սակագին: Հեռավար նույնականացում անցած ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում հնարավոր է Քարտի և PIN կոդի ծրարի առաքումն իրականացնել ՀՀ տարածքից դուրս՝ գանձելով տվյալ պահին առաքման ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տվյալ ուղղությամբ առաքման համար սահմանած սակագինը: Ընդ որում, սակագները Բանկն իրավունք ունի գանձել Հաճախորդի հաշիվներից սույն կանոնների հիման վրա:

9. Սույն կանոններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Բանկի սակագներով, «Այդի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով, Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների բանկային հաշիվների, փոխանցումների և «Այդի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագներով, Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով (այնքանով, որքանով չեն հակասում սույն կանոնների պահանջներին) Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:
10. Բանկի կողմից առաջարկվող այլ քարտային պրոդուկտների, համատեղ քարտերի կամ այլ ծրագրերի համար Բանկի կողմից սահմանված առանձին պայմանները, Սակագները և/կամ Պայմանագրերի դեպքում սույն կանոնները գործում են այնքանով, որքանով չեն հակասում վերջիններիս և դրանցում կարող են սահմանվել սույն կանոններից տարբեր պայմաններ և/կամ սահմանափակումներ:
11. Քարտի օգտագործման ընթացքում կատարվող բոլոր գործառնություններն իրականացվում են համաձայն սույն կանոնների և ԱրՔա, Visa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և Կանոնների:
12. Քարտի հետ մեկտեղ Բանկը Քարտապանի համար բացում և վարում է Քարտային հաշիվ, որը բացվում է Քարտապանի անունով: Քարտային հաշիվը կարող է բացվել տվյալ Քարտի Տեղեկատվական ամփոփագրով սահմանված արժույթներից որևէ մեկով, ընդ որում, Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել, ինչպես Քարտային հաշվի արժույթով, այնպես էլ Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով:
13. Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ հարկային մարմնի կողմից ներկայացված հայտի հիման վրա:
14. Բոլոր միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով: Արտարժութային Քարտերի համար սահմանված միջնորդավճարները գանձվում են տվյալ գործարքի օրվա համար ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:
15. Առանց Քարտապանի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և հարկային մարմնի կողմից ներկայացված հայտի հիման վրա:
16. Քարտապանն իր Քարտը կարող է օգտագործել մինչև Քարտի գործողության ժամկետի համապատասխան ամսվա վերջին օրը ներառյալ:
17. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և ենթակա է վերադարձման Բանկ՝ դրա վավերականության ժամկետի ավարտի դեպքում կամ Բանկի պահանջով՝ բացառությամբ Վիրտուալ քարտերի, որի դեպքում դադարեցվում է Քարտային հաշվից օգտվելու հնարավորությունը, իսկ Քարտային հաշիվը փակվում է:
18. Արգելվում է Քարտն օգտագործել անօրինական նպատակներով:
19. Եթե քարտային գործարքները կատարվել են սույն կանոնների դրույթների խախտումով, ինչպես նաև Քարտի, PIN ծածկագրի, Գաղտնաբառի, քարտի վրա նշված տեղեկատվության

(Քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործմամբ, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով, ապա նման դեպքում Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

20. Քարտերի հետ կապված հարցերով կամ տեղեկատվության տրամադրման համար Քարտապանի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկի հետ կապ հաստատելու համար գործում են Բանկի՝ ֆիզիկական անձանց հաճախորդների համար՝ (+374 10) 593333, (+374 12) 333333 և/կամ (+374 60) 273333, իսկ Իրավաբանական անձ կամ ԱՁ հաճախորդների համար՝ (+374 10) 593311 հեռախոսահամարներով:
21. PIN ծածկագիրը ստեղծվում է Քարտապանի կողմից ՀՀ տարածքում գործող Բանկերի ցանկացած ԱԳՄ կամ նման հնարավորություն ունեցող այլ բանկի ԱԳՄ Քարտը տեղադրելու միջոցով, որի համար Բանկում պարտադիր պետք է ճիշտ լրացված լինի հաճախորդի բջջային հեռախոսահամարը և ակտիվ լինի SMS-հաղորդագրությունների ստացման ծառայությունը, որից հետո սեղմում է «Քարտի ակտիվացում» կոճակը և Քարտին կցված հեռախոսահամարին ստանում է մեկանգամյա մուտքագրման կոդ: Ստացված կոդը մուտքագրելուց հետո Քարտապանից պահանջվում է ստեղծել քառանիշ PIN ծածկագիր, որի համար Քարտապանը պետք է 2 անգամ մուտքագրի նույն քառանիշ PIN ծածկագիրը: Վիրտուալ քարտերի դեպքում PIN ծածկագիր չի տրամադրվում կամ ստեղծվում. քարտն ակտիվացվում է Idram&IDBank հավելվածի կամ IDBanking առցանց հարթակի միջոցով, նույն հավելվածի Բանկինգ բաժնում ընտրելով քարտը և սեղմելով «Ակտիվացնել» կոճակը:
22. Առանձին դեպքերում Բանկի կողմից հնարավոր է Քարտի հետ միասին տրամադրվել PIN ծածկագիր: Բանկի կողմից Քարտապանին հնարավոր է Քարտի հետ միասին տրամադրել PIN ծածկագիրը պարունակող փակ ծրար (Քարտը և PIN ծածկագիրը տրամադրվում են առանձին ծրարներով). այս դեպքում Քարտն ակտիվացվում է Բանկի կողմից՝ Քարտը և PIN ծածկագիրը Քարտապանի կողմից ստանալուց հետո:
23. Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել PIN ծածկագիրը՝ համապատասխան հնարավորությամբ ՀՀ տարածքում գործող ԱԳՄ-ի միջոցով: PIN ծածկագրի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել նախ գործող և ապա նոր PIN ծածկագրերը:
24. PIN ծածկագիրը մոռանալու դեպքում Քարտապանը դիմում է Բանկին և ներկայացնում դիմում (Բանկում հաստատված ձևանմուշի)՝ կատարելով համապատասխան վճարում համաձայն Բանկի սակագների:
25. Սույն կանոններով նախատեսված բոլոր դրույթները, անկախ դրանցում Քարտ տերմինի հետ միաժամանակ Վիրտուալ քարտ տերմինի օգտագործված չլինելու հանգամանքից, կարգավորում են նաև Վիրտուալ քարտերով գործարքների կատարումը, եթե հատուկ նշում չկա, որ դրանք չեն վերաբերում Վիրտուալ քարտերին:
26. Քարտի պատվիրման համար էլեկտրոնային փոստի հասցեի առկայությունը պարտադիր է:
27. Սույն կանոնները տարածվում են նաև Բանկի կողմից առաջարկվող փաթեթային պրոդուկտների վրա (փաթեթ, որի մեջ մտնում է Բանկի կողմից միաժամանակ մատուցվող՝ մեկից ավելի ծառայություն), այնքանով, որքանով չեն հակասում փաթեթային պրոդուկտի տեղեկատվական ամփոփագրով հաստատված պայմաններին:
28. Հաճախորդը սույնով գիտակցում և ընդունում է, որ իր անունից կամ իր տվյալների տրամադրմամբ այլ անձանց իր անունից կամ իր փոխարեն կամ իր հաշիվներով գործարք

կատարելու հնարավորության ընձեռումը (այդ թվում՝ հաշվի համալրման հնարավորության տրամադրումը) համարվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին տվյալ անձին ծանոթանալու համաձայնության տրամադրում:

ԳԼՈՒԽ 4. ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

29. Քարտապանն իր կողմից Բանկի մասնաճյուղում կամ առցանց պատվիրված Քարտը ստանում է փակ ծրարով Բանկի տարածքում կամ Քարտապանի կողմից նշված հասցե առաքման միջոցով, եթե Բանկի ներքին իրավական ակտերով այդ քարտատեսակի համար նախատեսված է նման ծառայություն:
30. Քարտը թողարկվում և Քարտապանին է տրամադրվում տվյալ Քարտի Տեղեկատվական ամփոփագրով նախատեսված ժամկետում: Վիրտուալ քարտը պատվերից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում արտացոլվում է Idram&IDBank հավելվածում և IDBanking առցանց հարթակում:
31. Առցանց պատվիրվող Քարտերի համար Բանկի ներքին իրավական ակտերով և (կամ) տեղեկատվական ամփոփագրերով կարող են սահմանվել այլ պայմաններ, որոնք գործում են ի լրումն սույն կանոնների, և դրանցում կարող են սահմանվել սույն կանոններից տարբեր պայմաններ և/կամ սահմանափակումներ:
32. Քարտապանը պետք է ստուգի ծրարի փակ և անվնաս լինելը, Քարտի առկայությունը ծրարում, համապատասխանությունը Քարտի պատվիրման հայտին, ինչպես նաև Քարտի վրա նշված տվյալների (մասնավորապես, անվան, ազգանվան) ճշտությունը, իսկ Վիրտուալ քարտերի դեպքում՝ Բանկի Idram&IDBank հավելվածում և IDBanking առցանց հարթակում ցուցադրված Քարտապանի անուն, ազգանունը, արժույթը: Անհամապատասխանությունների դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:
33. Եթե Քարտապանը չի ստացել իր կողմից պատվիրված Քարտը, պատվիրման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, ապա Բանկն իրավասու է փակել Քարտապանի Քարտն ու Քարտային հաշիվը և ոչնչացնել Քարտը, իսկ Պայմանագիրը կհամարվի լուծված:
34. Վիրտուալ քարտերը ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է Բանկի Idram&IDBank հավելվածում և IDBanking առցանց համակարգում սեղմել ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ՔԱՐՏԸ կոճակը:
35. Եթե Քարտը պատվիրվել է առցանց (օնլայն, մոբայլ բանկինգ և այլն), որը Քարտապանին հնարավորություն է ընձեռում տվյալ համակարգի միջոցով ակտիվացնելու Քարտը, ապա Քարտի ակտիվացումն իրականացվում է բացառապես Քարտապանի կողմից տվյալ համակարգի միջոցով:
36. Շտապ պատվիրված Քարտերը հանձնվում են Քարտապաններին Բանկի Վարդանանց մասնաճյուղում՝ ք.Երևան, Վարդանանց 13 հասցեում: Շտապ պատվերի ժամանակ Քարտը Քարտապանին հանձնվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ից հետո՝ մինչև աշխատանքային ժամի ավարտը:
37. Կից քարտը տրամադրվում է հետևյալ պայմաններով.
    1) Քարտապանը կարող է ստանալ իր Քարտին Կից Քարտ(եր), ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար,

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

2) Կից քարտը կարող է տարբեր լինել հիմնական Քարտի տեսակից, սակայն պետք է վճարային համակարգի կողմից դասակարգված Քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի,

3) Կից քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական Քարտի Քարտային հաշվում,

4) Քարտապանը Բանկին գրավոր դիմում ներկայացնելով՝ կարող է սահմանել Կից քարտի համար կանխիկացման օրական սահմանաչափեր, գործարքների և կանխիկացման գործարքների օրական քանակի սահմանաչափերը,

5) Կից քարտը տրամադրվում է յուրաքանչյուր քարտատեսակի Տեղեկատվական ամփոփագրով տվյալ քարտատեսակի համար սահմանված ժամկետով, սակայն Կից քարտը դադարում է գործել հիմնական քարտի փակման դեպքում:

38. Քարտով և Կից քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են հիմնական Քարտապանի պարտավորությունները:
39. Կից քարտի վերաթողարկման դեպքում համաձայնություն կարող է տալ Քարտապանը, ինչպես նաև Կից քարտի քարտապանը՝ մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը:
40. Կից քարտի քարտապանը պարտավորվում է տեղեկացնել Բանկին Քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել Քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:
41. Կից քարտի Քարտապանը կարող է կատարել հետևյալ գործողությունները.
    1) Բանկից ստանալ Կից քարտը,
    2) Բանկից ստանալ Կից քարտով կատարված Գործարքների գծով տեղեկատվություն, այդ թվում՝ նաև տեղեկանք,
    3) Կից քարտով կատարել Գործարքներ,
    4) Բանկին ներկայացնել Կից քարտի գծով.
       ա. փակման դիմում,
       բ. արգելափակման/արգելաբացման դիմում,
       գ. Գործարքի բողոքարկման դիմում,
       դ. Տվյալների փոփոխման դիմում՝ բացառությամբ քարտի սահմանաչափերի փոփոխման:
42. Կից քարտով կատարված գործողությունների արդյունքում առաջացած ֆինանսական ռիսկը կրում է Հիմնական քարտի քարտապանը:

ԳԼՈՒԽ 5. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

43. Քարտապանն իր Քարտով կարող է իրականացնել կանխիկ ելք և/կամ մուտք, անկանխիկ վճարումներ (այդ թվում՝ Քարտից քարտ փոխանցում)՝ նման հնարավորություն ունեցող սարքավորումների միջոցով (ԱԳՄ, POS տերմինալ և այլն), Բանկի մասնաճյուղերում, եթե այլ սահմանափակումներ նախատեսված չեն Բանկի կողմից տվյալ քարտատեսակի համար սահմանված պայմաններով, սակագներով և/կամ պայմանագրերով: Անկանխիկ վճարումներ կարելի է նաև իրականացնել բանկերի հեռավար համակարգերի միջոցով, առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ առցանց միջավայրում: ԱԳՄ-ներով հնարավոր

է նաև օգտվել այլ ծառայություններից, ինչպիսիք են՝ PIN ծածկագրի փոփոխությունը, կենսաթոշակային քաղվածքի դիտումը և այլն:

44. Բանկի մասնաճյուղերում Քարտին կանխիկ մուտքագրված գումարը, Բանկի որևէ հաշվից Քարտին փոխանցումը, ինչպես նաև ԱԳՄ-ի միջոցով կատարված կանխիկի մուտքագրումը (Cash In), Քարտից Քարտ փոխանցումը Քարտային հաշվին հասանելի է դառնում առավելագույնը 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):
45. Քարտով կատարված գործարքի գումարը Քարտից ելքագրվում կամ մուտքագրվում է անմիջապես, իսկ Քարտային հաշվում արտացոլվում է որպես կանոն ԱրՔա համակարգում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը, իսկ ԱրՔա համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում (ԱրՔա պրոցեսինգային կենտրոնում և/կամ Visa, MasterCard վճարային համակարգերում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):
46. Քարտով կատարված գործարքների գումարները գործարքի կատարման օրվանից մինչև հաշվանցման օրը սառեցվում են քարտային հաշվին:
47. Կախված գործարքի տեսակից՝ գործարքի գումարը կարող է սառեցվել 8 օրացուցային օր ժամկետով «Գնում» գործարքի և 30 օրացուցային օր ժամկետով՝ «Գումարի սառեցում» (Նախնական գնում) գործարքի դեպքում՝ անկախ քարտի տեսակից (նշված ժամկետները հաշվարկվում են գործարքի կատարման հաջորդ օրվանից):
48. Եթե գործարքի գումարը սույն կանոնների 47-րդ կետում նշված ժամկետներում չի հաշվանցվում, ապա նշված ժամկետը լրանալուց հետո գործարքի գումարն ավտոմատ կերպով ապասառեցվում և հասանելի է դառնում քարտային հաշվին:
49. Սույն կանոնների 48-րդ կետում նշված դեպքում ապասառեցումից հետո գումարը առանց հավելյալ հավաստագրման կարող է գանձվել առևտրի/սպասարկման կետի կողմից, եթե հաճախորդին այդ գործարքի դիմաց ծառայություն է մատուցվել:
50. Սույն կանոնների 49-րդ կետում նշված դեպքում գործարքը Բանկի կողմից բողոքարկման ենթակա չէ, իսկ եթե առևտրի/սպասարկման կետի կողմից գործարքի դիմաց հաճախորդին ծառայություն չի մատուցվել, ապա գործարքը հնարավոր է բողոքարկվի Բանկի կողմից՝ սույն կանոնների դրույթների համաձայն:
51. Սույն կանոնների 50-րդ կետում նշված դեպքում հնարավոր է քարտային հաշվին առաջանա դեբիտորական պարտք՝ բավարար միջոցների բացակայության պատճառով, եթե ապասառեցված գումարը հաճախորդի կողմից մինչ հաշվանցումն օգտագործված է եղել, որը ենթակա է վճարման հաճախորդի կողմից:
52. Սույն կանոնների 45-րդ կետի իմաստով Քարտով կատարված գործարքներ են հանդիսանում նաև քարտից քարտ փոխանցումները (թե ելքային, թե մուտքային) և ԱԳՄ-ի միջոցով Քարտին կանխիկի մուտքագրումը (Cash In): Վարկային պարտավորության մարման նպատակով կատարված Քարտից փոխանցումը կամ ԱԳՄ-ի միջոցով Քարտին կանխիկի մուտքագրումը (Cash In) անհրաժեշտ է իրականացնել առնվազն վարկային պարտավորության մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում վարկային պարտավորությունը ժամկետանցվում է: Ընդ որում, եթե

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

փոխանցումը կատարվում է ՀՀ-ից դուրս թողարկված քարտից, ապա փոխանցումը պետք է կատարվի առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

53. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի Քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրերին գործարքների գումարները կարող են Քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:
54. Քարտով կանխիկի ստացման օրական գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում են Բանկի սակագներով: Սահմանված սահմանաչափը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում (եթե նման հնարավորություն սահմանված է տվյալ քարտատեսակի համար գործող տեղեկատվական ամփոփագրով): Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Բանկն իրավասու է սահմանել նաև այլ տեսակի գործարքների գումարային և քանակային սահմանափակումներ՝ դրա վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրելով Բանկի կայքէջում:
55. ՀՀ բանկերի ԱԳՄ-ների միջոցով կանխիկ գումարի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:
56. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Քարտով գործարքների իրականացումը (Քարտի արգելափակում), եթե՝
    1) Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ Քարտով կատարված գործարք(ներ)ի հնարավոր զեղծարար լինելու վերաբերյալ,
    2) Հաճախորդի կողմից խախտվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով սահմանված սահմանափակումները՝ համաձայն Բանկի պաշտոնական կայքում հրապարակված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականության կամ ՀՀ օրենսդրության,
    3) Հաճախորդի կողմից կամ օգտին իրականացվող գործարքներում /ներառյալ ստացվող փոխանցումներ/ օգտագործվել են Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված տվյալներից ու տեղեկատվությունից տարբերվող տվյալներ ու տեղեկատվություն
    4) Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ:
57. Քարտը կարող է արգելափակվել/արգելաբացվել հաճախորդի նախաձեռնությամբ՝ Idram&IDBank հավելվածի, Բանկի Կոնտակտային կենտրոն զանգահարելու, ինչպես նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ այցելելու միջոցով: Ընդ որում, Քարտը հնարավոր չէ արգելաբացել Idram&IDBank հավելվածի միջոցով, եթե այն արգելափակվել է զեղծարարության կասկածի պատճառով:
58. Քարտապանի կողմից Բանկին դիմելու միջոցով Քարտի արգելաբացումն իրականացվում է դիմումը ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ եթե դիմումը Քարտապանի կողմից ներկայացվում է ոչ աշխատանքային ժամին, ապա՝ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:
59. Բանկի նախաձեռնությամբ արգելափակված Քարտը Բանկի կողմից արգելաբացվում է, երբ վերանում է Քարտը արգելափակելու հիմքը, այն վերանալուց հետո նույն աշխատանքային

օրվա ընթացքում: Բանկի կողմից Քարտը կարող է չարգելաբացել, եթե արգելաբացման գծով առկա է Բանկի մերժման հիմնավորում:

60. Քարտի արգելափակման դեպքում չի դադարում Քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:
61. Քարտապանի՝ Քարտով կատարված ցանկացած գործարք հանդիսանում է Քարտապանի պարտավորությունը:
62. Քարտի փակման դիմում ներկայացնելիս Քարտապանը պարտավորվում է մարել առաջացած պարտավորությունը, այդ թվում՝ նաև դեբիտորական, բացառությամբ այն գործարքների, որոնք տեղի են ունեցել Քարտի ֆիզիկապես օգտագործմամբ՝ Քարտապանի կողմից Քարտը Բանկին վերադարձնելուց հետո:

ԳԼՈՒԽ 6. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ԱՆՀՊՈՒՄ (CONTACTLESS) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

63. Բանկի կողմից թողարկվող Քարտերն ունեն անհպում գործարքներ իրականացնելու հնարավորություն:
64. Անհպում գործարքներ իրականացնելիս անհրաժեշտություն չկա, որպեսզի Քարտապանն իր Քարտը փոխանցի վճարումն ընդունող աշխատակցին կամ տեղադրի ԱԳՄ-ի մեջ: Այս դեպքում Քարտապանն ինքն է մոտեցնում Քարտը POS տերմինալին կամ ԱԳՄ-ին:
65. ՀՀ տարածքում մինչև 20,000 ՀՀ դրամ գումարի չափով անհպում վճարում իրականացնելիս PIN ծածկագրի մուտքագրում կարող է չպահանջվել, իսկ ՀՀ-ից դուրս յուրաքանչյուր երկրի համար Վճարային համակարգերի կարող է սահմանվել առանձին սահմանաչափ, բացառությամբ այն դեպքերի, երբ քարտով վճարում իրականացնելու համար նախատեսված սարքը չունի PIN ծածկագիր մուտքագրելու տեխնիկական հնարավորություն:
66. ԱԳՄ-ի միջոցով անհպում գործարքներ իրականացնելիս (Քարտի մնացորդի հարցում, Քարտից կանխիկացում, կանխիկի մուտքագրում Քարտին և այլն) մինչ ԱԳՄ-ի կողքից հեռանալն անհրաժեշտ է համոզվել, որ գործարքն ավարտված է և ԱԳՄ-ի էկրանին արտացոլվում է գլխավոր էջի պատկերը, հակառակ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում անվտանգության նշված կանոնը չպահպանելու արդյունքում առաջացած հնարավոր ֆինանսական կորուստների համար:

ԳԼՈՒԽ 7. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ՔԱՐՏԻՑ ՔԱՐՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

67. Սույն գլխով նախատեսված կանոններին համապատասխան VISA վճարային համակարգի քարտերի Քարտապանները հնարավորություն են ստանում կատարել քարտից քարտ միջազգային փոխանցումների:
68. Փոխանցումը ստացող քարտի կարգավիճակը պետք է լինի ակտիվ: Ակտիվ կարգավիճակ չունեցող քարտին կատարված փոխանցումը կմերժվի փոխանցումը ստացող բանկի կողմից:

69. Սույն գլխով նախատեսված գործարքը հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվից տարբերվող արժույթով՝ տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված տարադրամի քարտային փոխարկումների փոխարժեքով:
70. Փոխանցման գումարը փոխարկվում է ստացող քարտի արժույթի՝ ըստ տվյալ քարտը թողարկած բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
71. Բանկը պատասխանատվություն չի կրում գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար:
72. Փոխանցման գումարը ստացող քարտին ակտիվանում է հաշված րոպեների ընթացքում (առավելագույնը՝ 30 րոպե, իսկ սույն գլխում ներառված ծառայությունների մատուցմանը մասնակից չհանդիսացող երկրների դեպքում՝ առավելագույնը երկու օրվա ընթացքում): Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ փոխանցվող գումարը ակտիվանում է նշված ժամանակահատվածից ավելի ուշ կամ ստացող Բանկի կողմում առաջացած խնդիրների պատճառով չի ակտիվանում:
73. Սույն գլխով նախատեսված ծառայության էական պայմանները, այդ թվում՝ երկրների ցանկը, որտեղ հասանելի է փոխանցման վերոնշյալ համակարգը, սահմանվում են Բանկի կայքում հրապարակվող տեղեկատվական ամփոփագրով:
74. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
75. Քարտապանը, համաձայնություն տալով սույն կանոններին, հավաստում է, որ գիտակցում և ընդունում է, ինչպես նաև համաձայն է քարտից քարտ միջազգային փոխանցումների (Visa direct) իրականացման սույն գլխում նշված պայմաններին:

ԳԼՈՒԽ 8. ՔԱՐՏԻ ԿՈՐՍՏԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

76. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին՝ կապ հաստատելով Բանկի (+374 10) 593333, (+374 60) 273333, (+374 12) 333333 շուրջօրյա հեռախոսահամարներով, այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ Բանկի աշխատանքային ժամերին, կամ ինքնուրույն արգելափակել քարտը՝ Idram&IDBank հավելվածի միջոցով:
77. Սույն կանոնների 76-րդ կետով սահմանված դեպքերում Քարտապանից ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը արգելափակում է Քարտը:
78. Մինչ Բանկին պատշաճ կերպով տեղեկացնելը կամ Idram&IDBank հավելվածի միջոցով Քարտն արգելափակելը Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը, Կից քարտի դեպքում նաև Կից քարտի պահառուն:
79. Բանկին տեղեկացնելուց հետո Քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ առցանց միջավայրում կատարված գործարքների համար

պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում Քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում (միջազգայնորեն գործող ցուցակ, որում ներառված Քարտերի համար վճարահաշվարկային համակարգերի կանոններով նախատեսված է, որ գործարքները կատարվում են միայն հավաստագրման հիման վրա)՝ համաձայն Բանկի սակագների:

80. Քարտի կորստի, գողության, դրանով կատարված զեղծարարության (այդ թվում՝ կասկածի առկայության) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից Քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները ենթակա են հատուցման Քարտապանի կողմից:
81. Երրորդ անձին Քարտի տվյալների հասանելի դառնալու կամ դրա կասկածի, ինչպես նաև Քարտի կորստի կամ գողության դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել Քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման Քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի Քարտի արգելաբացման դիմում: Այս դեպքում Քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
82. ՀՀ տարածքում կատարված մինչև 20,000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ տարածքից դուրս անկախ գումարի չափից անհպում և առանց PIN ծածկագրի մուտքագրման գործարքները Քարտապանի կողմից կատարված չլինելու դեպքում դրանք ենթակա չեն բողոքարկման (օրինակ՝ կորցրած կամ գողացված Քարտերի դեպքում):

ԳԼՈՒԽ 9. ՔԱՐՏԻ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՈՒՄ

83. Ընթացիկ ամսվա ընթացքում ժամկետը լրացող Քարտերը ենթակա են վերաթողարկման, եթե նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է հետևյալ դեպքերից որևէ մեկը.
    1) Քարտեր, որոնց միջոցով Քարտապանը վերջին 3 ամսվա ընթացքում (Իրավաբանական անձանց կամ Անհատ ձեռնարկատերերի քարտերի դեպքում 6 ամսվա ընթացքում) կատարել է մեկ կամ ավել Գործարք և վերաթողարկման պահին առկա չէ դեբիտորական պարտավորություն Քարտի սպասարկման վճարի կամ այլ վճարների գծով:
    2) Քարտի դրական մնացորդը մեծ կամ հավասար է Քարտի հերթական վճարման ենթակա սպասարկման վճարի ամբողջական գանձման համար, սակայն ոչ պակաս, քան 10 000 ՀՀ դրամը: Եթե Քարտը չունի սպասարկման վճար, ապա վերաթողարկման ենթակա են 10 000 ՀՀ դրամ և ավել մնացորդ ունեցող Քարտերը:
    3) Վարկային գծով Քարտեր, որոնց մայր գումարի և/կամ տոկոսագումարի գծով ժամկետանց օրերի քանակը չի գերազանցում 90 օրը:
    4) Քարտեր, որոնք փոխկապակցված են այլ գործող պրոդուկտների հետ և վերաթողարկման օրվա դրությամբ առկա է տվյալ պրոդուկտի գծով Բանկի սակագներով սահմանված նվազագույն պայմանները:

84. Սույն կանոնների 83-րդ կետում սահմանված չափանիշներից որևէ մեկը բավարարելու դեպքում Քարտերի վերաթողարկումը կատարվում է հետևյալ կարգով.
   1) Աշխատավարձային նախագծերի շրջանակում պատվիրված Քարտերը ենթակա են վերաթողարկման միևնույն պայմաններով, եթե աշխատավայրի փոփոխություն տեղի չի ունեցել: Այս դեպքում, երբ Բանկում վերաթողարկման ենթակա քարտատեսակը այլևս չի թողարկվում, ապա Քարտը վերաթողարկվում է Բանկի որոշմամբ Բանկում գործող այլ քարտի տեսակով փոխարինման միջոցով: Ընդ որում, աշխատավայրի փոփոխության, տվյալ կազմակերպության հետ աշխատավարձային նախագծի համագործակցության դադարեցման կամ Քարտով աշխատավարձ չստանալու դեպքում Քարտը վերաթողարկվում է Բանկում տվյալ քարտատեսակի համար Բանկի սակագներով սահմանված պայմաններով:
   2) Այն Քարտերը, որոնց տրամադրումը պայմանավորված է Բանկում որևէ փաթեթի, պրոդուկտի կամ ծառայության առկայությամբ, ապա վերջիններս ենթակա են վերաթողարկման համապատասխան պայմանների բավարարման դեպքում: Հակառակ դեպքում Քարտերը ենթակա են վերաթողարկման տվյալ քարտատեսակի համար Բանկի սակագներով սահմանված պայմաններով:
   3) Եթե Բանկում վերաթողարկման ենթակա քարտատեսակը այլևս չի թողարկվում, ապա Բանկի կողմից Քարտը ենթակա չէ ավտոմատ կերպով վերաթողարկման: Վերաթողարկման ցանկության դեպքում Քարտապանը զանգահարում կամ մոտենում է Բանկ՝ նոր Քարտի պատվիրման կամ այլ քարտատեսակով վերաթողարկման համար:
   4) Կից քարտերը ենթակա չեն 83-րդ կետով սահմանված կարգով վերաթողարկման: Վերաթողարկման ցանկության դեպքում Հիմնական քարտապանը զանգահարում կամ մոտենում է Բանկ Կից քարտի վերաթողարկման համար՝ մինչև Քարտի ժամկետի ավարտը:
85. Նախքան Քարտի գործողության ժամկետի ավարտը Բանկը՝ Քարտապանի Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստի հասցեին տեղեկացնում է Քարտի ժամկետի ավարտի և համապատասխան գործողության իրականացման վերաբերյալ:
   1) Այն դեպքում, երբ Քարտապանը չի ցանկանում վերաթողարկել Քարտը, ապա ստացված ծանուցմամբ սահմանված ժամկետում տեղեկացնում է Բանկին չվերաթողարկելու վերաբերյալ: Քարտապանի կողմից պատասխան չստանալու դեպքում Քարտը կվերաթողարկվի սույն գլխում սահմանված չափանիշներին համապատասխանող պայմանների համաձայն:
   2) Քարտերը, որոնք 83-րդ կետի սկզբունքով ենթակա չեն վերաթողարկման, Քարտապանի կողմից Քարտի վերաթողարկման ցանկության դեպքում ծանուցմամբ սահմանված ժամկետում Բանկին դիմելիս հնարավոր է Քարտը վերաթողարկել տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված պայմաններով:
   3) Քարտապանին սույն կանոնների 85-րդ կետով նախատեսված կարգով ուղարկված ծանուցումը համարվում է Բանկի կողմից ներկայացված օֆերտա, իսկ Քարտապանի կողմից վերաթողարկված Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված վճարի կատարումը և վերաթողարկված Քարտի ստանալը՝ ակցեպտ: Միաժամանակ

Քարտապանը սույն կանոններին համաձայնություն տալով, տալիս է Բանկին իր անհետկանչելի հանձնարարականը սույն կանոններով սահմանված կարգով քարտի վերաթողարկման ժամանակ իր հաշիվներից անակցեպտ կարգով գանձել վերաթողարկված քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված սակագներին համապատասխան գումար:

4) Քարտի գործողության ժամկետի ավարտմամբ պայմանավորված վերաթողարկումների դեպքում նոր Պայմանագիր չի կնքվում: Գործող Պայմանագրի դրույթները, ինչպես նաև սույն գլխում նկարագրված վերաթողարկման չափանիշները և սկզբունքները շարունակում են կիրառվել վերաթողարկված Քարտերի դեպքում:

ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ

86. Քարտի սպասարկման հետ կապված Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարները ենթակա են վճարման Քարտապանի կողմից: Բանկի կողմից սահմանված միջնորդավճարները հրապարակվում են Բանկի կայքէջում՝ համապատասխան տեղեկատվական ամփոփագրերում:
87. Քարտապանը վճարում է սպասարկման միջնորդավճարը՝ Բանկի Սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի ներքին իրավական ակտերով:
88. Քարտային գործարքների արդյունքում Քարտային հաշվին օգտագործման համար բավարար հասանելի մնացորդը գերազանցելու դեպքում Քարտային հաշվին ձևավորվում է դեբիտորական պարտավորություն, որը ենթակա է առաջնահերթ մարման: Բանկը Քարտապանից կարող է գանձել դեբիտորական պարտավորության տուժանք, եթե այդպիսին նախատեսված է տվյալ քարտատեսակի համար հրապարակված Բանկի սակագներով, սույն կանոններով կամ Պայմանագրով:
89. Քարտի գծով առաջացած պարտավորությունները (միջնորդավճարները, դեբիտորական պարտավորությունը և այլ վճարները), այդ թվում՝ Քարտի համապատասխան սակագներով սահմանված վճարները, ինչպես նաև Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ունեցած և չկատարված այլ պարտավորությունները Բանկն իրավունք ունի միակողմանիորեն անակցեպտ կարգով գանձել՝ առանց Քարտապանի լրացուցիչ հանձնարարականի: Պարտավորությունների մարումն առաջնահերթ կատարվում է Քարտային հաշվից, իսկ Քարտային հաշվին միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի՝ Բանկում գործող մնացած հաշիվներից: Ընդ որում, Քարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը իր բանկային հաշիվ(ներ)ին: Բանկն իրավունք ունի Քարտապանի Քարտային հաշվից անակցեպտ կարգով գանձել Բանկի նկատմամբ Քարտապանի այլ պարտավորությունները:
90. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից վերադարձվելուց հետո Բանկը մուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում): Անկախ չեղարկված գործարքի գումարի

վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

91. Առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության և/կամ վաճառված ապրանքի կամ այլ բանկի կանխիկի տրամադրման կետից գումարի կանխիկացման գործարքի դիմաց գանձված և Քարտապանի Քարտային հաշվից ելքագրված հավելյալ վճարի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
92. Քարտի միջոցով Քարտապանին տրամադրված վարկի և/կամ վարկային գծի մարման կարգը և պայմանները, հաշվարկվող տարեկան անվանական և փաստացի տոկոսադրույքների, տոկոսագումարների հաշվարկման և Քարտապանի՝ որպես վարկառուի, պարտավորությունների մարման ժամկետները, կարգն ու պայմանները սահմանվում է տվյալ վարկատեսակի համար հաստատված սակագներով և պայմաններով, ինչպես նաև կնքված վարկային պայմանագրով:

ԳԼՈՒԽ 11. ՔԱՐՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

93. Քարտապանը չպետք է փոխանցի Քարտը, հայտնի PIN ծածկագիրը, CVV/CVC կոդը, 3D Secure անվտանգության մեկանգամյա կոդը, գաղտնաբառն այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի Քարտը, PIN ծածկագիրը, գաղտնաբառը, Քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց: Նշված բոլոր տվյալների օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:
94. Քարտապանի կողմից պետք է ստորագրված լինի Քարտի հակառակ կողմի վրա ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտը: Ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու և այն առգրավելու համար: Սույն կետը չի վերաբերում Վիրտուալ և այն քարտերին, որոնք չունեն ստորագրման դաշտ:
95. Չի թույլատրվում Քարտը և PIN ծածկագիրը պահպանել միասին: Արգելվում է որևէ տեղ գրանցել և միասին պահպանել քարտի համարը, և/կամ CVV կոդը և/կամ քարտի վավերականության ժամկետը:
96. Առցանց միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) Քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN ծածկագրի մուտքագրում կամ հայտնում չի պահանջվում: Նման դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և արգելափակել Քարտը:
97. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և արգելափակել Քարտը՝ համաձայն սույն կանոնների 57-րդ կետի:
98. Քարտը օգտագործելիս PIN ծածկագիրն անհրաժեշտ է մուտքագրել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց և չտեսագրվի որևէ սարքի միջոցով: Սույն կետը չի վերաբերում Վիրտուալ քարտերին:

99. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում Քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ Քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:
100. Քարտապանը պետք է ուշադիր լինի, որպեսզի Քարտը չընթերցվի գործարքի իրականացման համար նախատեսված սարքերից բացի որևէ այլ սարքավորման օգնությամբ: Սույն կետը չի վերաբերում Վիրտուալ քարտերին:
101. Խորհուրդ չի տրվում օգտվել այն ԱԳՄ-ներից, առևտրի/սպասարկման կետերից և սարքավորումներից, որոնք Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև, եթե դրանց Քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին ամրացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:
102. Վիրտուալ միջավայրում Քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (Secure payments):
103. Գործարք կատարելիս PIN ծածկագիրը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում Քարտը կարող է արգելափակվել և/կամ առգրավվել: Քարտը կարող է առգրավվել նաև ԱԳՄ-ից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում Քարտը չվերցնելու դեպքում, ինչպես նաև ԱԳՄ-ի տեխնիկական խնդիրների և Քարտը վնասված լինելու պատճառով: Սույն կետը չի վերաբերում Վիրտուալ քարտերին:
104. Եթե ԱԳՄ-ի միջոցով Քարտով գործարք կատարելիս Քարտը ԱԳՄ-ում առգրավվել է, և Քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ Քարտը արգելափակվել է: Եթե Քարտը չի արգելափակվել, անհրաժեշտ է անհապաղ արգելափակել այն:
105. ԱԳՄ-ում առգրավված Քարտը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկ: Բանկի ԱԳՄ-ում առգրավված Քարտը վերադարձվում է Քարտապանին Քարտի առգրավման օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է Երևան քաղաքում կամ ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղ և միաժամանակ Քարտապանը ցանկանում է Քարտը ստանալ նույն քաղաքում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղ, սակայն Քարտապանը ցանկանում է Քարտը ստանալ Երևան քաղաքի որևէ մասնաճյուղից, 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկը չունի մասնաճյուղ: ՀՀ այլ բանկերի ԱԳՄ-ներում Քարտի առգրավման դեպքում Քարտը կարող է տրամադրվել Քարտապանին Բանկի կողմից այն ստանալու օրը կամ դրան հաջորդող այլ աշխատանքային օր: Առգրավված Քարտը 30 օրվա ընթացքում չստանալու դեպքում ենթակա է ոչնչացման: Սույն կետը չի վերաբերում Վիրտուալ քարտերին:
106. Առգրավված Քարտի ոչնչացումը չի ազատում Քարտապանին Բանկի նկատմամբ ունեցած Քարտին/քարտային հաշվին առնչվող պարտավորություններից, քանի որ Քարտը շարունակում է մնալ Քարտապանի համար հասանելի առցանց տիրույթում օգտագործման

համար՝ մինչ Քարտապանի կողմից տվյալ Քարտի փակման վերաբերյալ Բանկ դիմում ներկայացնելը:

107. ԱԳՄ-ի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից Քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար Բանկը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պատասխանատվությունն ուղղակի սահմանված է օրենքով, ինչպես նաև երբ միաժամանակ առկա է Բանկի մեղքը, և Քարտապանն այցելել է Բանկի որևէ մասնաճյուղ, սակայն վերջիններս չեն տրամադրել Քարտում առկա գումարը կամ պահանջվող մասը կանխիկ եղանակով: Ընդ որում, Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Քարտապանին պատճառված իրական (ուղղակի) վնասի չափով:

108. Քարտապանի ցանկությամբ՝ Բանկը Քարտապանին ուղարկում է Քարտով կատարված գործարքների մասին SMS կամ Բանկի կողմից առաջարկվող այլ միջոցով հաղորդագրություն Բանկում գործող սակագների համաձայն:

109. SMS ծառայությունից օգտվելու նպատակով Քարտապանը պարտավոր է Բանկում լրացնել համապատասխան ձևանմուշի դիմում: Դիմումի մեջ նշված SMS հաղորդագրության ծառայության համար Բանկ ներկայացված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում:

110. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պետք է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը (կատարված, մերժված և այլն): Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալուց հետո գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը կարող է տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում արգելափակելով Քարտը:

111. Վիրտուալ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վճարային համակարգերի կողմից հաստատված տարբերանշաններին (Visa-ի դեպքում “Verified by Visa”, MasterCard-ի դեպքում “MasterCard Secure Code”, ԱրՔա-ի դեպքում “ArCa SecurePay”»): Նշված տարբերանշանները կրող կայքերում գործարքներ կատարելու համար Քարտապանը պետք է մուտքագրի Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ գործարք կատարելիս տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառը, որը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստին ուղարկվող նամակի միջոցով: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով SMS հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

112. Ստացված ծածկագիրը մուտքագրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մուտքագրման էջի հասցեին: Այլ հասցեով էջ նշված ծածկագիրը մուտքագրելն արգելվում է:

113. Ինտերնետային առևտուր իրականացնելիս խորհուրդ է տրվում վճարումները իրականացնել միայն անձնական համակարգչով կամ հեռախոսով՝ քարտային տվյալների գաղտնիությունը պահպանելու նպատակով:
114. Ինտերնետային խանութներում վճարում կատարելիս ցանկալի է օգտվել միայն այն կայքերից, որոնց հասցեն սկսվում է “https” -ով՝ “http”-ի փոխարեն:
115. Քարտապանը պարտավոր է համոզվել, որ մուտք է գործել ճիշտ հասցեով կայք, քանի որ կարող են ստեղծվել նմանատիպ հասցեներով կեղծ կայքեր: Անծանոթ կայքից օգտվելու դեպքում անհրաժեշտ է նախօրոք ուսումնասիրել կայքի վերաբերյալ կարծիքները համացանցում, համոզվել, որ կայքն ունի ապրանքների/ծառայությունների մատուցման, առաքման, վերադարձի կանոններ, կոնտակտային տվյալներ հետադարձ կապի համար:
116. Ինտերնետային խանութներից գնումներ կամ այլ վճարումներ կատարելու համար ցանկալի է ունենալ առանձին Քարտ:
117. Քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով Բանկն իրավասու է միակողմանիորեն փոփոխել Քարտով գործարքների կատարման և/կամ հավաստման կարգը՝ գործարքի կատարման համար որպես պահանջ սահմանելով նույնականացնող ծածկագրերի (մեկանգամյա գաղտնաբառ և այլն) կիրառումը, որոնք կարող են Բանկի կողմից ուղարկվել Քարտապանի բջջային հեռախոսահամարին, էլեկտրոնային հասցեին կամ այլ միջոցներով:
118. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում Քարտի կիրառմամբ գործարքների կատարումը, ինչպես նաև մերժել ցանկացած գործարք, որը Բանկի հայեցողությամբ կարող է համարվել ռիսկային: Նման դեպքերում Քարտապանը պետք է կապ հաստատի Բանկի հետ: Եթե Քարտապանը Բանկ ներկայացված գրավոր կամ գրանցված էլեկտրոնային փոստից ուղարկված դիմումի հիման վրա Բանկից ստանում է ռիսկային գործարքների իրականացման թույլտվություն, ապա հետագայում Քարտով կատարված նմանատիպ բոլոր գործարքների գծով պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
119. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները, եթե հիմնավոր կասկածներ ունի Քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը Բանկի կողմից վերացվում է գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կամ բավարար պարզաբանումներ ստանալուց հետո:
120. Եթե Բանկի կողմից նկատվում են քարտով կատարվող կասկածելի գործարք(ներ), կամ Բանկը տիրապետում է հավաստի տեղեկատվության, որ քարտով կատարված գործարք(ներ)ը միանշանակ զեղծարար բնույթի է (են), ապա Բանկն իրավունք ունի առանց հաճախորդին նախապես տեղեկացնելու արգելափակի քարտը:
121. Քարտի փակման դեպքում (վաղաժամկետ կամ Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո) Քարտապանը պետք է Քարտը վերադարձնի Բանկ: Եթե Քարտը փակվել է Բանկի կողմից՝ հեռախոսազանգի, առցանց համակարգերով ներկայացված դիմումի/հաղորդագրության կամ սույն կանոններում նշված այլ հնարավոր եղանակով և ինչ-որ պատճառով Քարտապանը չի կարող վերադարձնել Քարտը, և այն գտնվում է իր մոտ, ապա Քարտապանը պետք է ոչնչացնի Քարտը՝ կտրելով մասերի մագնիսական երիզի

և միկրոպրոցեսորի (չիպի) երկայնքով: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտը չվերադարձնելու հետևանքով Քարտով իրականացված գործարքների համար: Սույն կետը չի վերաբերվում Վիրտուալ քարտերին:

122. Արգելվում է Քարտի նույնականացման տվյալները (Ամբողջական Քարտի համարը, գործողության ժամկետ, CVV կոդ, 3D Secure անվտանգության ծածկագիր, PIN ծածկագիր) հայտնել երրորդ անձանց, այդ թվում՝ նաև Բանկի աշխատակիցներին, հեռախոսազանգի, էլեկտրոնային փոստին եկած հաղորդագրության կամ սոցիալական ցանցերով ստացված նամակների միջոցով: Նման տեղեկատվության արտահոսքի դեպքում Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

123. Ֆինանսական կորուստներից խուսափելու նպատակով՝ Քարտին այլ քարտերից փոխանցում ստանալու դեպքում անհրաժեշտ չէ քարտի համարից զատ տրամադրել այլ տվյալներ (CVV կոդ, վավերականության ժամկետ, 3D Secure անվտանգության ծածկագիր և այլն):

124. ԱԳՄ-ով կամ առևտրի/սպասարկման կետում գործարք իրականացնելիս PIN ծածկագիրը անհրաժեշտ է մուտքագրել՝ այլ անձանց կամ տեղադրված սարքերի համար անտեսանելի եղանակով, ծածկելով այն ձեռքով:

125. Արգելվում է գործադրել ֆիզիկական ուժ Քարտը ԱԳՄ տեղադրելիս: Նման խնդրի դեպքում անհրաժեշտ է հնարավորության դեպքում զգուշացնել ԱԳՄ սպասարկող բանկին և օգտվել այլ ԱԳՄ-ից:

ԳԼՈՒԽ 12. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

126. Քարտապանն իրավունք ունի.

1) իր Քարտով կատարել կանխիկ և անկանխիկ գործարքներ Քարտի վճարային սահմանաչափի սահմաններում,
2) Բանկ ներկայացնել դիմումներ իր Քարտի սահմանաչափերի փոփոխման, Քարտի վերաթողարկման, քարտային գործարքի բողոքարկման, Քարտի տեսակի փոփոխման, փակման, տվյալների փոփոխման, արգելաբացման նպատակով,
3) ստանալ Քարտային հաշվի քաղվածքներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ,
4) դիմել և ստանալ SMS հաղորդագրություններ Քարտով կատարված գործարքների համար,
5) Քարտի տրամադրման և սպասարկման պայմանագրից բխող պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին, որը Բանկի և Քարտապանի միջև ծագած վեճը լուծում է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից: Սույն ենթակետը տարածվում է միայն ֆիզիկական անձ (այդ թվում՝

Անհատ ձեռնարկատեր), և ՀՀ օրենսդրության համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձանց վրա:

127. Քարտապանը պարտավոր է.

1) Քարտի կորստի, գողանալու, այլ անձանց քարտային տվյալները հասանելի դառնալու դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին՝ սույն կանոններում նշված եղանակներով,
2) կատարել Քարտի և Քարտային հաշվի սպասարկման հետ կապված տվյալ քարտատեսակի համար Բանկում գործող սակագներով սահմանված վճարները,
3) Visa/MasterCard/ArCa քարտերի լոգոները չօգտագործել այլ նպատակների համար,
4) Աշխատանքի փոփոխության դեպքում (աշխատանքից ազատվել, այլ աշխատանքի անցնել), որի հետևանքով այլևս աշխատավարձային մուտքեր չեն լինելու, տեղեկացնել Բանկին, եթե Քարտը տրամադրվել է Աշխատավարձային նախագծի շրջանակում,
5) Անվերապահորեն հետևել սույն կանոններով սահմանված Քարտով իրականացվող գործարքների անվտանգության կանոններին,
6) «Երևան Մոլ» նվեր քարտի տրամադրման և սպասարկման պայմանագիր կնքելու դեպքում քարտը օգտագործել միայն պայմանագրով նշված նպատակով, ինչպես նաև չկատարել տվյալ քարտի գումարի համալրում քարտի գործողության ամբողջ ընթացքում:

128. Բանկն իրավունք ունի.

1) մերժել Քարտով գործարքների իրականացումը, եթե պահանջվող գումարը (ներառյալ վճարման ենթակա միջնորդավճարները) գերազանցում է Քարտի վճարային սահմանաչափը,
2) մերժել նոր Քարտի տրամադրման և/կամ գործող Քարտի վերաթողարկման ցանկացած դիմում՝ առանց Քարտապանին բացատրություններ տրամադրելու,
3) Փակել Քարտապանի կողմից ստացված, սակայն 60 (վաթսուն) օր և ավել չակտիվացված Քարտերը,
4) Մերժել «Երևան Մոլ» նվեր քարտով գործարքների իրականացումը, բացառությամբ տվյալ քարտի տրամադրման և սպասարկման պայմանագրով նախատեսված նպատակով կատարվող գործարքների,
5) Փակել Քարտապանի «Երևան Մոլ» նվեր քարտը մինչև քարտի գործողության ժամկետի ավարտը, եթե Քարտապանն ամբողջությամբ օգտագործել է քարտին առկա միջոցները,
6) Միակողմանի կարգով փոփոխել Քարտի տրամադրման և սպասարկման սակագները, սույն կանոնները, ինչպես նաև Քարտի սպասարկման հետ կապված այլ վճարների չափերը: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված սակագներն ու անհրաժեշտ այլ վճարների մեծությունները սահմանվում են Բանկի՝ Քարտերի տրամադրման և սպասարկման սակագների տեղեկատվական ամփոփագրերով, որոնք հասանելի են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.idbank.am հասցեում: Սույն ենթակետով նախատեսված սակագների և այլ անհրաժեշտ վճարների մեծությունների, ինչպես նաև սույն կանոններում փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց և Քարտապանին իր կողմից նշված եղանակով ծանուցելուց 15 օր հետո՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման հանգեցնելու դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց և Քարտապանին իր կողմից նշված եղանակով

ծանուցելուց 7 աշխատանքային օր հետո /Ֆիզիկական անձ և Անհատ ձեռնարկատեր հանդիսացող Հաճախորդների դեպքում/, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ դրանց գործողության մեջ դնելու օրվանից,

7) Վաղաժամկետ հրաժարվել պայմանագրով նախատեսված պարտավորություններից՝ օրենսդրությամբ սահմանված կամ Քարտապանի կողմից սույն կանոնների և/կամ պայմանագրի դրույթների խախտման դեպքերում: Այդ մասին Քարտապանին 10 օր առաջ տեղյակ է պահվում հատուկ գրությամբ,
8) Քարտապանի հաշվին սխալմամբ մուտքագրված գումարները, պայմանագրով նախատեսված վճարները, տուգանքներն ու տույժերը, իրավասու պետական մարմինների կողմից ստացված որոշումների հիման վրա գանձման ենթակա գումարները, գանձել Քարտապանի՝ Բանկում ունեցած հաշիվներից,
9) Ստուգել Քարտապանի Քարտին կատարվող մուտքերը և աշխատավարձի չփոխանցման դեպքում վերանայել սակագները, եթե Քարտը տրամադրվել է Աշխատավարձային նախագծի շրջանակում,
10) Քարտապանի համաձայնությամբ Պայմանագրի շրջանակներում թողարկված Քարտը վերաթողարկել կամ փոխարինել այլ տեսակի Քարտով,
11) Քարտապանի կողմից Բանկի կողմից առաջարկվող փաթեթների շրջանակներում Քարտի պայմանագիրը կնքվելու դեպքում տվյալ ծառայությունների փաթեթից հրաժարվելու կամ դրա շրջանակներում Քարտապանի տրամադրված ծառայություններից որևէ մեկից հրաժարվելու դեպքում, միակողմանիորեն փոխել քարտի պայմանները՝ սահմանելով Բանկի պաշտոնական ինտերնետային էջում տվյալ պահին հրապարակված պայմանները՝ այդ մասին տեղեկացնելով Քարտապանին,
12) Սահմանափակել մեկ Քարտապանի կողմից միևնույն տեսակի և արժույթի Քարտերի ձեռքբերման քանակը,
13) Մերժել հաշվով գործառնությունների իրականացումը, եթե
    ա. Բանկում առկա է Քարտապանի վերաբերյալ հակասական տվյալներ,
    բ. Համապատասխան փաստաթղթերը կազմված են սահմանված պահանջների խախտումներով,
    գ. Հաշվով կատարվող գործառնությունը հակասում է ՀՀ գործող օրենսդրությանը,
    դ. Հաշվում դրամական միջոցները բացակայում են,
    ե. Պատշաճ չի բացահայտվել և (կամ) Բանկի պահանջով Քարտապանի կողմից չի տրամադրվել ՀՀ գործող օրենսդրությամբ - կասկածելի գործարքներով քննարկման առարկա գումարների իսկական պատկանելության հիմքերը կամ պատշաճորեն չի հիմնավորվել դրանց ծագման օրինականությունը,
    զ. Բանկի մոտ կասկածներ են առաջացել Քարտապանի ինքնության կամ գործարքի օրինականության մասին,
    է. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Քարտապանի հաշվի վրա դրված է սահմանափակումը.
    ը. Սույն կանոններով, պայմանագրով կամ այլ փաստաթղթերով նախատեսված այլ դեպքերում

129. Բանկը պարտավոր է.

1) պատշաճ կերպով ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն տեղական և միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված կանոնների և պայմանագրի,
2) Քարտապանին տրամադրել քաղվածք՝ նրա նախընտրած եղանակով, սույն կանոնների համաձայն,
3) Վճարել տոկոսներ՝ Քարտապանի Քարտային հաշվին մուտքագրված դրական մնացորդի նկատմամբ Բանկում տվյալ Քարտի համար գործող սակագների համաձայն,
4) Քարտի կորստի, գողության, զեղծարարության վերաբերյալ Քարտապանից և/կամ վճարային համակարգերից ծանուցում ստանալուն պես՝ կատարել Քարտի գործունակության կասեցում, եթե մինչ այդ քարտը չի արգելափակվել հաճախորդի կողմից:

130. Ստորագրելով Պայմանագիրը Քարտապանը՝

1) հավաստում է, որ ծանոթ է ՀՀ քրեական օրենսգրքի 295-րդ «Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելը, իրացնելը կամ իրացմանն աջակցելու», 296-րդ «Փողերի լվացման» և 309-րդ «Ահաբեկչական գործունեությանը նպաստելու», 310 «Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելու» մասին հոդվածներին, և բոլոր ֆինանսական միջոցները, որոնք կփոխանցվեն Պայմանագրի հիման վրա բացվող հաշվով (հաշիվներով), ստացված կլինեն օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն լինի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ: Անհրաժեշտության դեպքում Քարտապանը պատրաստ է Բանկին տրամադրել տեղեկություններ (հիմնավորող փաստաթղթեր) կատարվող ցանկացած գործարքի մասին,
2) հավաստում և ընդունում է, որ այն դեպքում, երբ իր հաշվին անկանխիկ ձևով մուտքագրված գումարի վերաբերյալ երկու շաբաթվա ընթացքում չի կարողանում տրամադրել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, Բանկի ներքին իրավական ակտերով կամ այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը/տեղեկությունները, Բանկն իրավունք ունի նշված գումարը հետ ուղարկել՝ առանց իր համաձայնության (անակցեպտ),
3) հավաստում է, որ ծանոթացել է «ԱյԴի Բանկի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» քաղաքականությանը (https://idbank.am/information/consumer-rights/contentfooter/AML-CTF-control/), ընդունում է այն և պարտավորվում է Բանկի հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում առաջնորդվել դրանով,
4) գիտակցում և ընդունում է, որ Բանկի հետ հաստատված իրավահարաբերությունների ընթացքում իր կողմից տրամադրված հեռախոսահամարը Հաճախորդի՝ Բանկում գրանցված անձնական տվյալներից ենթակա է հեռացման հետևյալ դեպքերում.

ա. Եթե երրորդ անձը Հաճախորդի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից Բանկի պաշտոնական հեռախոսահամարին զանգահարելու միջոցով տեղեկացրել է, որ տվյալ հեռախոսահամարը իրեն է պատկանում, կամ

բ. Եթե երրորդ անձը Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեների, մասնաճյուղերի և/կամ Հեռախոսազանգերի Կենտրոնի միջոցով Բանկ է ներկայացրել Բջջային կապի օպերատորի կողմից տրված տեղեկանք՝ ի հավաստում, որ տվյալ համարը պատկանում է իրեն:

Ընդ որում՝ սույն կետի 4)-րդ ենթակետում նշված հիմքերն ի հայտ գալու մասին Բանկից տեղեկանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պարտավորվում է այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի և/կամ Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնել դիմում՝ հեռախոսահամարի փոփոխություն կատարելու նպատակով, իսկ մինչ փոփոխություն կատարելը, Բանկը դադարեցնում է տվյալ հեռախոսահամարին տեղեկատվության տրամադրումը: Բանկի կողմից 4)-րդ ենթակետում նշված հիմքերի մասին տեղեկացնելու համար Հաճախորդի հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում նույն տեղեկատվությունը ուղարկվում է Հաճախորդի գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին:

Եթե 4)-րդ ենթակետում նշված հիմքերն ի հայտ գալուց հետո 1 ամսվա ընթացքում Բանկի աշխատակցին չի հաջողվում կապ հաստատել Հաճախորդի հետ և/կամ Հաճախորդի կողմից չի իրականացվում տվյալների թարմացում, ապա վերջինիս հաշիվները ենթակա են արգելափակման: Հաճախորդի կողմից տվյալների թարմացում իրականացնելու դեպքում հաշիվներ արգելաբացվում են:

131. Բանկը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պահպանելով ամենաբարձր էթիկական և կարգավորող չափանիշները՝ պատասխանատու գործունեություն է իրականացնում և երաշխավորում է, որ ոչ Բանկը, ոչ էլ Բանկի ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում կիրառելի միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը/շրջանցմանը:

132. Բանկը, լինելով միջազգային ֆինանսական համակարգի պատասխանատու մասնակից, միևնույն ժամանակ առավել բարձր գնահատելով և պաշտպանելով հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդհատությունը՝ հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:

133. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ պատժամիջոցների քաղաքականությունը արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև Բանկը կարող է հրաժարվել այդ հաճախորդներին սպասարկելուց:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

134. Բանկը պատասխանատվություն է կրում Քարտապանի, Քարտի և գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Պայմանագիր դրույթների:

135. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հսկողությունից դուրս տեղի ունեցած վիճահարույց իրավիճակների համար, որոնք կապված են իրեն կամ այլ բանկերին պատկանող սարքավորումների անսարքության կամ սպասարկման կետերի կողմից Քարտը սպասարկման չընդունելու հետ:
136. Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար ամբողջ պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
137. Եթե Քարտապանը պատշաճ կերպով տեղեկացրել է Բանկին իր Քարտի կորսված/գողացված լինելու վերաբերյալ, ապա այդ պահից հետո Քարտի անօրինական օգտագործմամբ օնլայն հավաստագրված գործարքների արդյունքում Քարտապանին պատճառված վնասների համար պատասխանատվությունը կրում է Բանկը, բացառությամբ առանց հավաստագրման (off-line) գործարքների:
138. Քարտապանը, ստանալով SMS տեղեկացումը իր Քարտով կատարված գործարքի վերաբերյալ, անհապաղ պետք է կապ հաստատի Բանկի հետ՝ այդ գործարքի իսկությունը ստուգելու և անհրաժեշտության դեպքում Քարտը վերաթողարկելու նպատակով: Նշված գործողությունները չկատարելու դեպքում՝ Քարտով զեղծարարության/խարդախության կատարման ռիսկը և դրանից բխող ֆինանսական հետևանքը կրում է Քարտապանը:
139. Եթե Քարտապանն ակտիվացրել է SMS ծառայությունը, սակայն չի ստացել տեղեկացում Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ, ապա այդ գործարքների գծով զեղծարարության/խարդախության ռիսկը կրում է Բանկը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վավերացված է Քարտապանի կողմից կամ վերջինիս կողմից գործարքի բողոքարկումը ենթակա է մերժման սույն կանոնների և/կամ տեղական և միջազգային վճարահաշվարկային համակարգերի կանոնների համապատասխան, որոնց դեպքում կատարված գործարքների ֆինանսական հետևանքները կրում է Քարտապանը:
140. Սույն կանոնների 138-րդ և 134-րդ կետերով սահմանված դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ Քարտապանին SMS հաղորդագրության միջոցով գործարքի վերաբերյալ ծանուցումը ժամանակին կամ ընդհանրապես չի տրամադրվել կապի խափանման կամ հեռահաղորդակցման օպերատորի մոտ ծագած տեխնիկական կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով:
141. Մինչև Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը, բացառությամբ սույն կանոնների 139-րդ կետով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 14. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ

142. Եթե Քարտով կատարված գործարքի արժույթը տարբերվում է Քարտային հաշվի արժույթից, ապա կատարված գործարքների ձևակերպման ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի:
143. Արժութային փոխարկումները տարանջատվում են երկու տարբեր փուլերի:

144. Փոխարկման առաջին փուլը ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի շրջանակներում իրականացված գործարքների համար կատարվում է գործարքի պահին, երբ գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի՝ հիմք ընդունելով գործարքի կատարման պահին ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար՝ համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Բանկի պրոցեսինգային կենտրոնի խորհրդի նիստի որոշմամբ սահմանված տոկոսով:

145. ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի շրջանակներից դուրս իրականացված գործարքների համար, առաջին փուլով գործարքի գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով (Visa վճարային համակարգի դեպքում բացառությամբ եվրոյով կատարված գործարքների, որի դեպքում մշակվում է Եվրոյով գումարը), որից հետո ԱՄՆ դոլարը կամ եվրոն փոխարկվում է Քարտի արժույթի՝ սույն կանոնների 144-րդ կետում սահմանված փոխարժեքով:

146. Երկրորդ փուլով ԱրՔա վճարահաշվարկային համակարգի միջոցով կատարված գործարքի, ինչպես նաև Visa և MasterCard միջազգային վճարահաշվարկային համակարգերի միջոցով՝ ԱՄՆ դոլարով (Visa վճարային համակարգի դեպքում նաև Եվրոյով) մշակված գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի՝ գործարքի հաշվանցման օրվա համար Բանկի կողմից հրապարակված քարտային փոխարժեքով:

147. Իսկ այն դեպքում, երբ Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի միջոցով կատարված գործարքի արժույթը տարբերվում է ԱՄՆ դոլարից (Visa վճարային համակարգի դեպքում նաև եվրոյից), ապա կատարված գործարքի գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ գործարքի հաշվանցման օրվան նախորդող օրվա համար Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով (ընդ որում՝ Visa համակարգի դեպքում գանձվում է նաև միջնորդավճար գործարքի գումարի 2 (երկու) տոկոսի չափով), այնուհետև գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի՝ գործարքի հաշվանցման օրվան նախորդող օրվա համար Բանկի կողմից սահմանված քարտային փոխարժեքով:

148. Սույն կանոնների 144-147-րդ կետից բացառություն են կազմում այդ դեպքերը, երբ գործարքի և Քարտային հաշվի արժույթները համընկնում են: Այս դեպքում Քարտային հաշվում հաշվանցվող գումարը համապատասխանում է գործարքի գումարին:

149. Իրականացված գործարքների գումարների հաշվանցման ժամանակ կատարված արժութային փոխարկումների արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

ԳԼՈՒԽ 15. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

150. Բանկը՝ առնվազն երեսնօրյա պարբերականությամբ, Քարտապանին է տրամադրում Քարտային հաշվի Քաղվածքներ, որտեղ արտացոլված են Քարտային հաշվին կցված բոլոր Քարտերով իրականացված գործարքները՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Քարտապանի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով, եթե առկա չէ այլ կարգավորում:

151. Քարտային հաշվի Քաղվածքը չի ներառում հավաստագրված կամ չհավաստագրված և դեռևս Բանկի կողմից Քարտային հաշվին չհաշվանցված գործարքները:
152. Քաղվածքում ներառված տեղեկատվության վերաբերյալ Քարտապանի կողմից ներկայացված առարկությունները Բանկը դիտարկում է ՀՀ օրենսդրությամբ, ԱրՔա, Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:
153. Բանկը և Քարտապանն ընդունում են, որ Քարտապանին՝ Պայմանագրով ընտրված գրանցման/բնակության հասցեներով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ, անկախ այդ ծանուցումները ստանալու փաստից:
154. Քաղվածքի տրամադրումից հետո 15 օրացուցային օրվա ընթացքում Քարտապանի կողմից քաղվածքում նշված գործառնությունների վերաբերյալ գրավոր բողոքարկումներ չստանալու դեպքում քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից հաստատված:

ԳԼՈՒԽ 16. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

155. Անմիջականորեն Քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Քարտապանը կարող է սահմանված կարգով Բանկում լրացնել գործարքի բողոքարկման դիմում, եթե խնդիրն անմիջապես առևտրի/սպասարկման կետի հետ լուծելու բոլոր հնարավոր միջոցները սպառված են:
156. Մինչ զեղծարարության արդյունքում կատարված գործարքների, ինչպես նաև ԱԳՄ-ից կատարված կանխիկացումների դիմաց բողոքարկման դիմում ներկայացնելը հաճախորդի կողմից առևտրի/սպասարկման կետին կամ ԱԳՄ-ն սպասարկող բանկին դիմելու անհրաժեշտություն առկա չէ:
157. Գործարքը հնարավոր չէ բողոքարկել որպես զեղծարար, եթե այն կատարվել է՝
    1) Հաճախորդի կողմից, կամ իր լիազորությամբ, այդ թվում՝ իր կողմից քարտի տվյալների, և/կամ Առցանց հարթակների մուտքային տվյալների, մուտքային գաղտնաբառի և/կամ այլ անձնական անվտանգային տվյալների երրորդ անձին տրամադրման կամ կեղծ/շինծու կայքում կամ առցանց հարթակում մուտքագրելու միջոցով կամ արդյունքում,
    2) ԱԳՄ-ի կամ կանխիկացման POS տերմինալի միջոցով,
    3) Անհպում տեխնոլոգիայի կիրառմամբ (Contactless), ընդ որում, միջազգային գործարքների դեպքում՝ անկախ գումարի չափից, իսկ տեղականների դեպքում՝ մինչև 20,000.00 ՀՀ դրամը,
    4) Թոքենի կիրառմամբ (Apple pay/Google pay),
    5) Երկկողմանի ստուգում անցած և հավաստագրված 3D Secure անվտանգության համակարգով,
    6) Բաժանորդագրության դիմաց, որն իրականացվել է հաճախորդի կողմից տվյալ առևտրի/սպասարկման կետում արդեն իսկ կցված քարտից:

158. Քարտով կատարված գործարքը որպես զեղծարար հնարավոր է բողոքարկել գործարքի կատարման ամսաթվից հետո 120 օրացուցային օրվա ընթացքում:

159. Մինչ գործարքը որպես զեղծարար բողոքարկելը քարտը ենթակա է բլոկավորման, որից հետո այն արգելաբացման ենթակա չի լինի, քանի որ հետագայում քարտով կրկին որևէ զեղծարար գործարք կատարվելու դեպքում այն այլևս հնարավոր չի լինի բողոքարկել:

160. Բաժանորդագրության դիմաց գանձման դեպքում գործարքը հնարավոր է բողոքարկել, եթե մինչ գումարի գանձման ամսաթիվը հաճախորդը կասեցրել է բաժանորդագրությունը, սակայն կասեցումից հետո առևտրի/սպասարկման կետի կողմից քարտից գանձվել է բաժանորդագրության դիմաց վճարը և հաճախորդի կողմից տրամադրվել է հետևյալ տեղեկատվությունը.

1) Բաժանորդագրության կասեցման ամսաթիվը,
2) Մանրամասն նկարագրություն, թե հաճախորդն առևտրի/սպասարկման կետին ինչ եղանակով է տեղեկացրել բաժանորդագրության կասեցման վերաբերյալ (էլեկտրոնային փոստ, հեռախոսազանգ, ֆիզիկական հասցե և այլն),
3) Բաժանորդագրության կասեցման նպատակով առևտրի/սպասարկման կետի կողմից պահանջվող ձևաթղթի կրկնօրինակը (կիրառելիության դեպքում):

161. Կասեցված բաժանորդագրության դիմաց գանձման դեպքում գործարքը հնարավոր է բողոքարկել գործարքի կատարման ամսաթվից հետո 120 (մեկ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում, սակայն եթե բաժանորդագրության կասեցման նպատակով հաճախորդը չի դիմել առևտրի/սպասարկման կետին՝ մինչ բաժանորդագրության գումարի գանձումը, ապա գործարքը հնարավոր չէ բողոքարկել:

162. Եթե հաճախորդը չեղարկել է գործարքը, կասեցրել է ծառայությունը կամ վերադարձրել է ապրանքը, կամ գործարքը չեղարկվել է առևտրի/սպասարկման կետի կողմից, և առևտրի/սպասարկման կետի կողմից ստացել է գումարի փոխհատուցման վերաբերյալ գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) ծանուցում, սակայն գումարն այդպես էլ չի փոխհատուցվել, ապա հաճախորդը կարող է ծանուցումը ստանալուց հետո 120 (մեկ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում ներկայացնի բողոքարկման դիմում, որը չի կարող գերազանցել գործարքի կատարման ամսաթվից 540 (հինգ հարյուր քառասուն) օրացուցային օրը: Բողոքարկման դիմում ներկայացնելիս հաճախորդի կողմից պետք է Բանկին տրամադրվի նաև առևտրի/սպասարկման կետի կողմից ստացված գումարի փոխհատուցման ծանուցման կրկնօրինակը:

163. Եթե հաճախորդը պատվերը ստացել է վնասված, կամ այն չի համապատասխանել այն ապրանքին, որը պատվիրվել է հաճախորդի կողմից, ապա մինչ բողոքարկման դիմում ներկայացնելը հաճախորդը պետք է փորձի ապրանքը վերադարձնել առևտրի/սպասարկման կետին, բացառությամբ, եթե առևտրի/սպասարկման կետի կողմից նման պահանջ հաճախորդին չի ներկայացվել:

164. Սույն կանոնների 163-րդ կետում նշված դեպքում գործարքը հնարավոր է բողոքարկել ապրանքի փաստացի վերադարձման ամսաթվից 120 (մեկ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում, որը սակայն չի կարող գերազանցել գործարքի կատարման ամսաթվից 540 (հինգ հարյուր քառասուն) օրացուցային օրը:

165. Քարտով կատարված գործարքի բողոքարկման դիմումը կարող է ներկայացվել ոչ ուշ, քան գործարքի կատարման ամսաթվից 120 (մեկ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայությունը պետք է մատուցվի գործարքի կատարման օրվանից ավելի ուշ: Այդ դեպքում գործարքը հնարավոր է բողոքարկել ծառայության մատուցման ակնկալվող ամսաթվից հետո 120 (մեկ հարյուր քսան) օրացուցային օրվա ընթացքում, որը չպետք է գերազանցի գործարքի կատարման օրվանից 540 (հինգ հարյուր քառասուն) օրացուցային օրը: Դիմումի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը, առևտրի/սպասարկման կետի հետ ունեցած նամակագրության կրկնօրինակը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

166. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

167. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից Քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից կարող է գանձվել Բանկի սակագներով սահմանված վճար՝ տվյալ քարտատեսակի համար նման վճարի առկայության պարագայում:

168. Քարտապանի կողմից ներկայացված բողոքարկման դիմումի վերջնական արդյունքի վերաբերյալ տեղեկատվությունը Քարտապանին տրամադրում է ԱրՔա, Visa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից բողոքարկման գործընթացների համար սահմանված ժամկետներում, եթե գործարքը կատարվել է Բանկի առևտրի/սպասարկման կետում, ապա դիմումի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Բանկի ԱԳՄ-ով կատարված գործարքի դեպքում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

169. Բողոքարկված գործարքների գումարները կարող են հաճախորդին Բանկի նախաձեռնությամբ ժամանակավորապես փոխհատուցվել մինչ բողոքարկման գործընթացի ավարտը: Այս պարագայում հաճախորդը պարտավորվում է ժամանակավորապես փոխհատուցված գումարը վերադարձնել Բանկին՝ Բանկի առաջին իսկ պահանջի դեպքում, եթե բողոքարկումը մերժվի առևտրի/սպասարկման կետի, կամ ԱԳՄ-ն սպասարկող բանկի, կամ Բանկի կողմից սպասարկվող առևտրի/սպասարկման կետի կողմից: Բողոքարկումը մերժվելու դեպքում Բանկն իրավասու է գանձել նախապես փոխհատուցված գումարը հաճախորդի ցանկացած հաշվից, իսկ դրական մնացորդի բացակայության դեպքում ձևավորել դեբիտորական պարտք:

170. Բողոքարկման ընթացքի և վերջնական արդյունքի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախորդին տրամադրվում է Բանկում գրանցված իր էլեկտրոնային փոստի միջոցով:

171. Գործարքի բողոքարկման, կամ բողոքարկումը շարունակելու նպատակով հաճախորդից կարող է պահանջվել տրամադրել հավելյալ տեղեկատվություն, որը չի տրամադրվել բողոքարկման դիմումը ներկայացնելիս: Հավելյալ տեղեկատվության հարցումն իրականացվում է սույն կանոնների 170-րդ կետում նշված եղանակով:

172. Եթե բողոքարկումը մերժվում է առևտրի/սպասարկման կետը կամ ԱԳՄ-ն սպասարկող բանկի, կամ Բանկի կողմից սպասարկվող առևտրի/սպասարկման կետի կողմից, որից հետո հաճախորդի կողմից տրամադրվում է այնպիսի տեղեկատվություն, որը հնարավոր էր և պետք է տրամադրվեր հաճախորդի կողմից բողոքարկման դիմումը ներկայացնելիս, ապա Բանկն իրավասու է մերժել հաճախորդի դիմումը՝ դադարեցնելով բողոքարկման գործընթացը:
173. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից Քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:
174. Գործարքի բողոքարկման դիմումը կարող է չընդունվել կամ մերժվել Բանկի կողմից, եթե տվյալ գործարքը հնարավոր չէ բողոքարկել օրենսդրությամբ, կամ վճարային համակարգերի կողմից կիրառվող սահմանափակումների հետևանքով (օրինակ՝ միջազգային պատժամիջոցներ, սահմանափակումներ, դիմումը վճարային համակարգերի կողմից սահմանված ժամկետներից ուշ ներկայացնելու դեպքում և այլն):

ԳԼՈՒԽ 17. ՔԱՐՏԻ ՓԱԿՈՒՄԸ

175. Բանկն իրավասու է սույն կանոններով և Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով, այդ թվում՝ «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և հաճախորդի հետ գործարար հարաբերությունները դադարեցնելու» ընթացակարգով, սահմանված կարգով միակողմանիորեն փակել Քարտը և Քարտային հաշիվը, եթե Քարտապանը Բանկի նկատմամբ ունի Քարտի գծով և/կամ Բանկի կողմից մատուցված այլ ծառայությունների գծով չմարված պարտավորություններ, Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում՝ այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ծանուցման հիման վրա:
176. Քարտը փակելիս փակվում են նաև այդ Քարտի բոլոր Կից քարտերը, որոնք ենթակա են վերադարձման Բանկ:
177. Բանկի նախաձեռնությամբ Քարտը փակելու դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից մարել Քարտի հետ կապված Բանկի նկատմամբ բոլոր պարտավորությունները:
178. Քարտապանը կարող է միակողմանիորեն դադարեցնել Քարտի գործողությունը և փակել Քարտն ու Քարտային հաշիվը՝ Բանկ ներկայացնելով համապատասխան փակման դիմում և ամբողջությամբ մարելով Քարտի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները: Քարտի փակման դիմումը հնարավոր է ընդունել հեռախոսազանգի միջոցով, ինչպես նաև Բանկի համար ընդունելի այլ եղանակներով:
179. Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված միջնորդավճարները հետ չեն վերադարձվում:
180. Քարտի փակումը չի դադարեցնում Քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և

տուժանքները: Քարտապանը պարտավոր է մարել նաև Քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան Քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել Քարտի փակումից հետո: Ընդ որում, Քարտապանը ընդունում է, որ Բանկի կողմից ուղարկվող ծանուցումները չստանալու ամբողջ ռիսկը կրում է ինքը և պարտավորվում է ձեռնարկել միջոցներ՝ իր կողմից Բանկին տրամադրված ծանուցման եղանակների միջոցով, ուղարկվող ծանուցումները պատշաճ ստանալու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 18. ՔԱՐՏԻ ԹՈՔԵՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԹՈՔԵՆՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

181. Քարտի թոքենացումը դա քարտի կցումն է Apple Pay/Google Pay էլեկտրոնային վճարումների համակարգերին, որի արդյունքում ձևավորվում է քարտի համարի թվային համարժեքը՝ թոքենը:
182. Թոքենացումը հնարավոր է կատարել ինչպես Apple Pay/Google Pay էլեկտրոնային վճարումների համակարգերում քարտի տվյալները մուտքագրելու, այնպես էլ Idram&IDBank հավելվածի միջոցով:
183. Քարտի թոքենացումից հետո վճարում, այդ թվում՝ առցանց, կամ կանխիկացում կատարելիս հնարավոր է օգտագործել քարտային հաշվի միջոցները՝ առանց քարտի ֆիզիկական առկայության՝ օգտագործելով այն էլեկտրոնային կամ թվային սարքը (սմարթ հեռախոս, սմարթ ժամացույց, պլանշետ և այլն, այսուհետ՝ Սարք), որի Apple Pay/Google Pay էլեկտրոնային վճարումների համակարգերին կցվել է քարտը:
184. Միևնույն քարտը կարող է կցվել առավելագույնը 10 (տասը) Սարքի: Քարտը յուրաքանչյուր Սարքի կցելիս ձևավորվում է նոր թոքեն, ուստի՝ տարբեր Սարքերով գործարքներ իրականացնելիս վճարման անդորրագրի վրա թոքենի թվերը տարբեր են լինում:
185. Միևնույն Սարքին կարող են կցվել մեկից ավել քարտեր:
186. Թոքենի միջոցով առևտրի/սպասարկման կետերում վճարում կատարելու, ինչպես նաև ԱԳՄ-ից կանխիկացում կատարելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի POS տերմինալը կամ ԱԳՄ-ն ապահովված լինեն NFC տեխնոլոգիայով, իսկ ինտերնետային կայքերում առցանց վճարում իրականացնելիս կայքում պետք է առկա լինի Apple Pay/Google Pay համակարգերով վճարման հնարավորություն:
187. Թոքենի միջոցով առևտրի և սպասարկման կետերում վճարումներ իրականացնելիս քարտի PIN ծածկագրի փոխարեն գործարքը հաստավում է Սարքի գաղտնաբառի, Face ID-ի, կամ Touch ID-ի միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ POS տերմինալի կարգավորումներից ելնելով թոքենով գործարք իրականացնելիս պահանջվում է մուտքագրել նաև քարտի PIN ծածկագիրը:
188. Թոքենի միջոցով ԱԳՄ-ից կանխիկացում կատարելիս պարտադիր կերպով պահանջվում է մուտքագրել նաև քարտի PIN ծածկագիրը:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

189. Թոքենի միջոցով կատարված գործարի չեղարկման դեպքում Սարքի առկայությունը պարտադիր է (օրինակ՝ եթե քարտը միաժամանակ կցված է և՛ հեռախոսին, և՛ ժամացույցին, ապա հեռախոսով գնված ապրանքը վերադարձնելիս հնարավոր չէ ներկայացնել ժամացույցը. հեռախոսի ֆիզիկական առկայությունը առևտրի և սպասարկման կետում պարտադիր է):

190. Թոքենի միջոցով կատարված գործարքը որպես զեղծարար բողոքարկման ենթակա չէ, քանի որ թոքենացման փուլում կատարվում է հաճախորդի նույնականացում: Թոքենացման ընթացքում՝ Apple Pay/Google Pay էլեկտրոնային վճարումների համակարգերին քարտը կցելիս մուտքագրվում է քարտի ամբողջական տվյալները՝ քարտի համարը, քարտի վավերականության ժամկետը և քարտի CVV ծածկագիրը, ինչպես նաև հաճախորդին ուղարկված մեկանգամյա անվտանգության գաղտնաբառը, կամ կցումը կատարվում է Idram&IDBank հավելվածի միջոցով:

191. Սարքի կորստի դեպքում անհրաժեշտ է անմիջապես արգելափակել քարտը՝ համաձայն սույն կանոնների 76-րդ կետի: